

Հովիկ Գրիգորյան

ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ Կ. ՊՈԼԻՍ ԱՆՑՆԵԼԸ

Բանալի բառեր – Ցուցական Պատասխանատու մարմին, ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողով, Զրիստափոր Միքայելյան, «Փորձնական կանոնագիր», «Նժույզի գործ», Կ. Պոլիս, Ելընզի պալատ, Իզմիր, օժանդակ գործիչներ:

Հայոց ազատամարտում մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը՝ ՀՅԴ-ի կազմակերպած վերջին խոշոր գործը Կարմիր սուլթանին պատուհասելու ձեռնարկն էր, որը, ձախողվելով հանդերձ, ժամանակին մեծ արձագանքներ է ունեցել: Անցած ավելի քան 110 տարիներին այդ իրադարձությանն այս կամ այն չափով անդրադարձել են տասնյակ հեղինակներ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում: Այնուհանդերձ, դրա հետ կապված մի շարք հարցեր այսօր էլ ստվերում են մնացել, որոշներին էլ տրվել են հակասական, իրականությանը քիչ առնչվող պատասխաններ: Մասնավորապես պատասխանի են սպասում հետևյալ հարցերը. Մեծ մարդասպանին պատուհասելու խնդիրն ինչպե՞ս հայտնվեց ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի օրակարգում, ինչո՞ւ ՀՅԴ-ի առաջնորդն անձամբ կանգնեց այդ գործի գլուխ, նախքան Կ. Պոլիս անցնելն ի՞նչ քայլեր ձեռնարկեց և ի՞նչ խնդիրներ լուծեց ժողովում ընտրված Ցուցական մարմինը:

Սոֆիայում կայացած ՀՅԴ-ի 3-րդ ընդհանուր ժողովը (1904 թ. հունվար-մարտ), քննության անցնելով առաջիկա մարտավարական խնդիրները, նախևառաջ ճշգրտելով Սասունում արդեն սկսված շարժմանն աջակցելու նպատակով իրագործելիք քայլերը¹, անդրադառնում է նաև ՀՅԴ գործունեության մեջ կարևոր տեղ զբաղեցնող ցուցական գործունեության հարցին: Ըստ որում՝ վերջինիս առնչվող մարտավարական խնդիրները նույնպես դիտարկվում են Սասունին աջակցելու առաջնահերթության տեսանկյունից:

Ցուցական գործունեության վերաբերյալ ժողովում արվում է հինգ առաջարկություն²: Դրանցից առաջինում, նկատի ունենալով Կ. Պոլսի աննպաստ պայմանները, ոմանք առաջարկում էին ցույցի կազմակերպումը սահմանափակել Իզմիրով (Չմյուռնիա): Դրա օգտին բերվող փաստարկներն էին՝ անհամեմատ մեղմ հսկողությունը, բաց նավահանգիստ լինելը, բավարար թվով տեղացի գործիչների առկայությունը: Առաջարկը չի ընդունվում, բայց ընդառաջ գնալով Իզմիրը ցուցական գործունեության վայր դարձնելու Ոսկեհանքի (ՀՅԴ-ի փաստաթղթերում այդպես անվանվում էր Իզմիրը) Գործադիր վարչության առաջարկին՝ վճռվում է Կ. Պոլսի հետ Իզմիրը նույնպես դարձնել ցուցական գործունեության ասպարեզ: Մինչ այդ ՀՅԴ Կիլիկիայի Պատասխանատու մարմինն ենթակա Ոսկեհանքի կազմակերպությունը դրվում էր Կ. Պոլսի Ցուցական մարմնի ենթակայության ներքո:

¹ Տե՛ս Լիլթեր Յ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետ՝ Լիլթեր...), խմբ. Յ. Տասնապետեանի, Բ. Հատոր, ք. տպագրութիւն (յաւելուածով), Պէյրուք, 1985, էջ 110-112:

² Տե՛ս նույն տեղում, էջ 112:

Մյուս առաջարկներն այս կամ այն կերպ արտացոլվում են Ընդհանուր ժողովի՝ Ցուցական մարմնի նպատակները սահմանող երեք հանձնարարականներում: Դրանցից առաջինն անմիջականորեն առնչվում էր Սասունի շարժմանը. «Վիշապի (Կ. Պոլիս՝ 3.9.) ու Ոսկեհանքի շրջանին մեջ այլեւայլ ձեռնարկութիւններով արձագանգ տալ պատրաստուելիք Բարձրաւանդակի (Սասունի՝ 3.9.) շարժումին եւ ապագային երկրին մէջ տեղի ունենալիք ապստամբական ձեռնարկներուն»: Երկրորդը վերաբերվում էր հայ-մակեդոնական դատերը միացնելու նպատակով նպատակահարմար որևէ պահի համատեղ ձեռնարկ իրականացնելուն: Երրորդ հանձնարարականը Մեծ մարդասպանին պատուհասելու վերաբերյալ վճիռն էր, որը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Երկրի շարժումներէն անկախ գործ կատարել Վիշապի մէջ այն պարագային միայն, երբ յոյս կայ հոյակապ ձեռնարկ մը գլուխ բերելու»¹:

Այսպիսով, ընդունված որոշման առաջին մասն ուղղակի առնչվում էր Սասունի շարժմանը: Այս հարցում Ցուցական մարմնից գործնական քայլեր էին սպասվում մինչև 1904 թ. ավարտը: Մյուս հանձնարարականներն իրականացնելու հարցում նա ժամանակի սահմանափակում չունէր: Միայն դեպքերի զարգացումները ցույց կտային, թե հանձնարարականներից որի իրագործման վրա շեշտը կդնի Ցուցական մարմինը: Չէ՞ որ առաջին խնդրի իրականացումը տևական ժամանակով, գուցե և ընդմիջտ բացառելու էր երրորդը: Կասկածից վեր է, որ ընտրվելիք ճանապարհն էսպես կախված էր լինելու ստեղծվելիք Ցուցական պատասխանատու մարմնի կազմից:

Սուլթանին ահաբեկելու որոշումը առանձին անձանց կամքով օրակարգ մտած սովորական հարց չէր: 1890-ականների շարդերից հետո այդ թեմայի կողքով չէին կարող անտարբեր անցնել ազատագրական պայքարի անգամ ամենասառը դատող և հավասարակշիռ գործիչները: Չինակիցների վկայությամբ, այդ հարցը տարիներ շարունակ զբաղեցրել է Զ. Միքայելյանին: Բարդ էին նրա առջև դրված գործնական խնդիրները՝ «Դրոշակ»-ի բովանդակության էական բարելավում, Հայկական հարցի օգտին եվրոպական քարոզչության աշխուժացում, «Pro Armenia»-ի հրատարակության կազմակերպում, ազատամարտի համար նյութական միջոցների հայթայթում... Թվում է, այլ բանի մասին մտորելու ժամանակ պարզապես չունէր: Բայց արյունոտ սուլթանից վրեժխնդրի լինելու սևեռուն գաղափարը տիրապետել էր նրան: Սովորաբար խոհեմ և կշռադատ Քրիստափորն այդ հարցում կտրուկ կերպարանափոխվում էր: Նման պահերը նկատի ուներ Մ. Վարանդյանը, երբ գրում էր. «...ստեպ առիծի խոյանք ուներ, ցասումի ու ատելութեան զօրավոր բռնկումներ, որոնք փոթորկում էին նրա հոգին եւ տարրալուծում նրա գեղեցիկ ու սովորաբար անխռով դեմքը...»²:

Հոգեբանական նման վիճակում գաղափարն աստիճանաբար վերածվում էր համոզմունքի, իսկ վերջինս՝ պատվանդան դառնում համարձակ ու խոլական ծրագրերի մշակման համար: «Մեծ-մեծ ծրագիրներ կը յղանար նրա մշտապես եռուն ուղեղը, գրում է Մ. Վարանդյանը, - եւ ամենէն մեծը յաճախանքի պես բռնել էր նրա ամբողջ էութիւնը... կազմակերպել հայ ժողովրդի վրեժխնդրութեան սրբազան դաւը, զարնել այն մարդուն, որ 300000 հայերի ջնջման հեղինակն էր... Մտածեց երկար, որոճաց

¹ Նույն տեղում, էջ 113:

² Վարանդեան Մ., Քրիստափոր Միքայելեան, «Նորք», 1991, N 8-9, էջ 92:

երկար այդ ծանր կնճիռը եւ ի վերջոյ յղացաւ այն արիւնոտ գործը, որու հետեւանքներէն մէկը պիտի լինէր իր սեփական նահատակութիւնը»¹:

Զ. Միքայելյանի ժնկյան մտորումներին նույն բնութագրումն է տվել Նաև Ա. Ահարոնյանը. «Քրիստափոր օր ու գիշեր որոճում էր մի մեծ, մի ահաւոր գաղափար... Մի օր վճռեց Կարմիր Սուլթանի դէմ քալել հին օրերի առասպելական հսկայի պէս, որ գնում է իր հայրենի աշխարհն ապականող վիշապը զարկելու... Քրիստափորի վճռականութիւնը հասկանալու համար նորէն պէտք է վերյուշել իր անհուն անօրինակ սերը դէպ իր ժողովուրդը, եւ այդ իսկ ժողովրդի ապրած սարսափները մի մարդ-հրեշի երեսից, մի բռնաւորի, որ թունաւորում է աշխարհի մթնոլորտը իր շնչով եւ պղծում երկրի երեսը... Կարմիր Սուլթանը նրա համար դարձել էր մղձաւանջ, խեղդող մի ճիւղ, որ ծուատում է նրա հոգին գիշեր ու ցերեկ»²:

Տարիների հոգեբանական մաքառումների արդյունքում Զ. Միքայելյանի մոտ ձևավորվել էր այն համոզմունքը, որ հեղափոխության վրեժխնդրության դերը վերապահված է հենց իրեն: Դա թերևս այն վճռորոշ ազդակներից էր, որ նրան հարկադրել էր համակերպվել հայ մեծահարուստներից բռնությամբ միջոցներ հանգանակելու քայլի անխուսափելիությանը: «Փոթորիկ»-ի ամենաեռուն օրերին՝ 1903 թ., նա սկզբունքորէն լուծված էր համարում իր Կ. Պոլիս մտնելու հարցը: Ավելին, վախճանը կանխագագող ծնողի նման, փորձում է կարգավորել «զավակների» հետ կապված առկախ խնդիրներ՝ ձգտելով նվազագույնի հասցնել իր բացակայության պատճառով առաջանալիք բացը: Մասնավորապէս Ա. Ահարոնյանին հանձնարարում է Թիֆլիսից մեկնել ժնկ՝ համալրելու «Դրոշակ»-ի խմբագրակազմը: Այն հարցին, թե ինչո՞վ է զբաղվելու ինքը, տալիս է հետևյալ պատասխանը. «Ես էլ, ի՞նչ իմանամ, դէ գնում եմ Պոլիս, ...հօ չի կարելի այսպէս թողնել... այսքան զոհեր... այս ժողովուրդը...»³: «Да, теперь иду на Султана (Այո, հիմա գնում եմ Սուլթանի դէմ - Յ.Գ.)», - սրանք իրեն ճանապարհող զինակցին ուղղված նրա հրաժեշտի խոսքերն էին⁴:

Եզրահանգումը միանշանակ է: 1903 թ. Զ. Միքայելյանը Կովկասը թողնում էր՝ Կ. Պոլիս անցնելու անխախտ վճռականությամբ: Կայացված վճիռը, որ տարիների մտորումների արդյունք էր, հավասարազոր էր մահվան գնալուն: Այդ քայլը համահունչ էր հեղափոխականների միջավայրում տիրող մտայնությանը: Դա մի շրջան էր, երբ հայ գաղափարական երիտասարդության միջավայրում տիրապետող էր հայրենիքի համար նահատակվելու՝ մոլեռանդության հասնող գաղափարը: Դժվար է ասել, թե ինչ գործոններ էին վճռորոշ դեր խաղում այդ պահին՝ հեղափոխական նիհիլիստական գաղափարների թափանցումը հայկական միջավայր, ռաֆֆիական գրականության գլխապատույտ առաջացնող ռոմանտիզմը, թե՞ 1890-ականների ջարդերի ծանր տպավորությունը: Գուցե՝ բոլորը միասին վերցրած: Այդ գաղափարը լուրջ ազդակ էր արևելահայ երիտասարդների՝ դէպի Երկիր մղվելու պարագայում: Դրա ակունքները մաքուր էին և վկայում էին Յայոց ազատամարտի բարոյական բարձր չափանիշների ու գաղափարական անաղարտության մասին:

¹ Նույն տեղում, N 10-12, էջ 162:

² Ահարոնեան Ա., Քրիստափոր Միքայելեան, Բոստոն, 1926, էջ 126, 155, 162:

³ Նույն տեղում, էջ 158:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 159:

Այդ մտայնությունը, սակայն, ուներ իր հիվանդոտ ծայրահեղությունները: Խոսքը «բարձրագույն հեղափոխական ցենզ»-ի մասին է, որ հաճախ բարդ իրավիճակի առաջ էր կանգնեցնում կուսակցական կառույցներին, խաթարում վերջիններիս բնականոն աշխատանքը, խոչընդոտում, որ յուրաքանչյուրը իր տեղը զբաղեցնի ազատամարտի այն բնագծում, որտեղ ի շահ գործի լավագույնս կարող էր դրսևորել իր հնարավորությունները: Մալխասը տվել է այդ մտայնության փայլուն բնութագրումը. «...Հայաստանի համար մեռնիլը տեսակ մը խոեալ դարձեր էր...: Մոլեռանդ բան մը կար ասոր մէջ, տեսակ մը հոգեբանական յափշտակութիւն...: Դուրսը աշխատիլ, թէկուզ ամենածանր պայմաններու մէջ, երբ կեանքի վտանգ չկար, չէր կարելի գոհացնել զիրենք, ասոր համար ալ Երկիր անցնիլը, կապուած կեանքը կորսնցնելու հետ, ուներ անդիմադրելի գրաւութիւն մը: ...Սահմանի վրայ, եթէ մարդ իր կաշիէն իսկ դուրս գար, Նորէն բան մը պակաս կը մնար, երբ սահմանը չէր անցներ: Հայաստանի սահմանը անցնիլը, հին ժամանակներու ցամաքով Երուսաղէմ ուխտի երթալու պէս, մեծագործութիւն մըն էր. բարձրագոյն յեղափոխական ցենզն էր այդ, որ կրնար ստանալ ոեւէ յեղափոխական գործիչ: Այս մտայնութիւնը ոչ թէ յատուկ էր միայն զինուորներու, սահմանամոտ շրջանի գործիչներուն, այլէն Նոյնիսկ մեր կուսակցական ղեկավարներուն, Սիմոնէն սկսած մինչեւ Զրիստափորը...»¹:

Փաստորէն, անգամ ցարական իշխանությունների ձեռքակալություններից և աքսորից զերծ չմնացած փորձառու գործիչները, անկախ իրենց վաստակից, լիարժեք հեղափոխականներ չէին համարվում և դեռ պետք է ապացուցեին, որ օտար չեն յուրայինների միջավայրում: Նման մտայնությունն ինչ-որ տեղ հասկանալի ու ներելի էր երիտասարդ հեղափոխականների, բայց միանգամայն վնասակար ու անընդունելի ղեկավար գործիչների համար: Այնինչ այն առկա էր նաև ՀԿԴ ղեկավարության միջավայրում: Դրանից զերծ չէր մնացել Զ. Միքայելյանը: «Ինձ թուում է, որ այն ժամանակ կուսակցութեան մէջ տիրող հիւանդոտ հոգեբանութիւնը նրայ (Զրիստափորի – Հ.Գ.) վրայ եւս ազդած էր,- գրում է ՀԿԴ նշանավոր գործիչ Հովսէփ Տեր Դավթյանը,- իբրև կուսակցութեան ղեկավար՝ նա ինքը պետք է մասնակցեր որոշուած ձեռնարկին, թէկուզ այդ ձեռնարկին համապատասխանող յատկութիւններ չունենար, թէկուզ կուսակցութեան ուրիշ, ոչ պակաս կարեւոր եւ պատասխանատու ասպարեզներում լինէր անփոխարինելի, յանուն յեղափոխականութեան նա ինքը պետք է մասնակցեր ահաբեկման, ի՛ր ձեռքով պիտի նետեր ռումբը»²: Կյանքը ցույց տվեց, որ նման մտայնությունը սխալ էր, իսկ դրա հետևանքները՝ աղետալի:

Վերն ասվածի վերաբերյալ անենք մի ճշգրտում: «Բարձրագույն հեղափոխական ցենզի» և «անձնվիրության» պահանջի հարցում Զ. Միքայելյանին ամենևին բնորոշ չէր ծայրահեղությունը, ինչպես շատ ուրիշների: Այդ դեպքում ի՞նչը հարկադրեց նրան անել այն, ինչից խուսափում էր ուրիշների պարագայում: Պատասխանը մեկն է. ստացած անարդարացի վիրավորանքը, որ խոցել էր նրա արժանապատվությունը: Հարցն առնչվում էր Բալկաններում լույս տեսնող «Շարժում» թերթի էջերում ՀԿԴ գործիչներ Գարեգին Խաժակյանի և Հակոբ Վարդ-Պատրիկյանի ծավալած քարոզչության հետ: Մի կարճ ժամանակ գործելով Չմյունխայում և Կ. Պոլսում՝ նրանք դա համարում էին

¹ Մալխաս, Ապրումներ, Ա. Հատոր, ք տպագր., Պեյրուզ, 1956, էջ 274:

² Լազեան Գ., Դեմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, 1949, էջ 208:

սեփական «հեղափոխական բարձրագույն ցենզի» և «անձնվիրության» վկայություն և բացահայտ քամահրանքով էին վերաբերվում դեռևս Երկիր չեղողների նկատմամբ: «Շարժում»-ի թիրախ էր ընտրվել հատկապես Զ. Միքայելյանը:

«Շարժում»-ը այդ տարիներին բարձրացնում էր ազատամարտի համար լուրջ և ցավոտ խնդիրներ: Բայց տարօրինակ էր, որ այս դեպքում վրիպել էր: Զ. Միքայելյանի ներդրումը Հայոց ազատամարտում շատ ավելին էր, քան նրա ընդդիմախոսներինը: Ինչ վերաբերում է անձնվիրությանը, ապա եթե Վարդոն ու Խաժակը կարճ ժամանակով ճաշակել էին թուրքական բանտի դժվարությունները, ապա Զ. Միքայելյանն էլ ոչ մեկ անգամ վայելել էր ռուսական բանտի և աքսորի «հաճույքները»: Բացի այդ, նա աչքի էր ընկնում չափից ավելի համեստ կենցաղով և դրամական խնդիրներում ծայրահեղ մաքրությամբ, ինչը չենք կարող ասել Յ. Վարդ-Պատրիկյանի մասին: Անկախ գաղափարական ցանկացած հիմնավորումից՝ այս պատմության մեջ տգեղը բարոյական սկզբունքի կատարյալ բացակայությունն էր:

«Շարժում»-ի հողվածներին տուրք տվեց անգամ Ս. Չավարյանը: Լինելով բարոյական բարձր չափանիշների տեր՝ ևս ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովում պահանջում էր, որ կուսակցության ղեկավարներն անձամբ մտնեն Երկիր, որ անձնվիրության բարձր ցենզ սահմանվի ղեկավար մարմիններում ընտրվողների համար: Թեև Ս. Չավարյանի հարցադրումները միանգամայն անկեղծ էին, բայց ավելի էին շիկացնում մթնոլորտը: Պետք էր ամեն գնով հերքել ինչպես մեղադրանքները, ապացուցել դրանց կատարյալ սնանկությունը: Ազատամարտի վետերանն իր համար կայացրել էր վերջնական վճիռ: Մնում էր, որ ընդհանուր ժողովը իրեն ազատեր այլ հոգսերից՝ ամբողջ թափով դավադրական պայթյալի մեջ մխրճվելու համար:

Ցուցական մարմնի կազմի ընտրությունը դրամատիկ վախճան է ունենում: Վերջին հնարավորությունն էր փակելու դեպի Կ. Պոլիս մղվող Զ. Միքայելյանի ճանապարհը, ինչը, սակայն, չի արվում: Որպես ապացույց, բերենք ընդհանուր ժողովի արձանագրության ժխտ տողերը. «Ցուցական Մարմնի ընտրութեան անցնելիս ընկեր Էլլենը (Քրիստափորի կուսակցական մականուններից մեկն է՝ Յ.Գ.) նոյն Մարմնի անդամակցութեան համար իր թեկնածութիւնը դրած լինելով՝ ժողովականներէն մին հետեւեալը առաջարկեց. «Ժողովը կազմակերպութեան շահը աչքի առաջ ունենալով, վտանգաւոր կը գտնէ Էլլենի Ցուցական Մարմնի մէջ մտնելու ցանկութիւնը, ուստի եւ կ'առաջարկէ ետ առնել իր թեկնածութիւնը»:

Ժողովը, խորհրդակցելով, **միաձայնութեամբ** (ընդգծումը մերն է - Յ.Գ.) ընտրեց Էլլենը իբր Ցուցական Մարմնի անդամ»¹:

Կայացված որոշումը որքան էլ միաձայն, սխալ էր և դեպքերի ընթացքով չարդարացված: Զաղաքական կուսակցության բարձրագույն մարմինը հեշտությամբ, առանց ափսոսանքի ստույգ մահվան էր ուղարկում իր առաջնորդին: Եվ դա այն պահին, երբ նոր իրավիճակի հետ կապված՝ բազմապատկվում և առավել դժվարին էին դառնում ՀՅԴ-ի առջև դրված խնդիրները: «Աշխարհի յեղափոխական պատմութեան մէջ գուցէ դա եզակի դեպքն է,- գրում է Ա. Ահարոնյանը,- երբ թաղաքական կուսակցութեան անփոխարինելի շեֆը ինքն է անձամբ նետուում ահաբեկումների սոսկումնե-

¹ Նիւթեր..., Բ. հատոր, էջ 134:

րի մէջ ուժանակը ձեռքին, երբ նա այնքան հեշտութեամբ կարող էր իրեն փոխարինող ունենալ, ինքը մնալով գերագոյն ղեկավար»¹:

Ի՛նչ տրամաբանությամբ բացատրել ընդունված որոշումը. ՅՅԴ ղեկավարների բարոյական ու քաղաքացիական բարձր հատկանիշներով, հայ հեղափոխականների միջավայրում հիվանդագին աստիճանի հասած «հեղափոխական բարձրագոյն ցենզի» գաղափարով, ընդհանուր ժողովում «անձնվիրության» հարցի շուրջ ծավալված սուր բանավեճի ազդեցությամբ, թե՛ իր՝ Զ. Միքայելյանի կողմից մինչ այդ կայացրած վճռի անշրջելիությամբ և դրանում գինակիցներին համոզելու կարողությամբ: Հավանական է, որ նշված բոլոր հանգամանքներն էլ այս կամ այն չափով ուղղորդել են որոշում կայացնողներին: Բայց անկախ այն բանից, թե դրանցից որն էր վճռորոշ, կարող ենք հաստատագրել. զգացմունքայնությունը հարթեց բանականությանը:

Ցուցական մարմնի կազմում ընտրվում են նաև Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո, Կարմրաթշկ), Կարապետ Եղիկյանը (Աշոտ Բագրատունի, Սև Աշոտ), Արտաշես Սերեմճյանը (Թորգոմ) և Հոնան (Հովնան) Դավթյանը: Առաջին երեքը մասնակցում էին ընդհանուր ժողովին, իսկ Հ. Դավթյանը մինչ ժողովն էր տվել Կ. Պոլիս մտնելու համաձայնություն: Ցուցական մարմնի տնօրինության ներքո դրվում են խոշոր միջոցներ: 1904-1906 թթ.-ին իրեն տրամադրված 119614 ֆրանկից հետագայում նա ՅՅԴ Արևմտյան բյուրոյին է վերադարձրել 2200 ֆրանկ: Հետևաբար, Կ. Պոլիսի և Իզմիրի ձեռնարկների համար ծախսվել է 117414 ֆրանկ, ինչը գրեթե հավասար էր ռուսական 50000 ռուբլու²:

Ինչևիցե, որոշումը կայացված էր: Հարկավոր էր հնարավորինս արագ հունի մեջ դնել Ցուցական մարմնի գործունեությունը և զորակցություն ապահովել Սասունի արդեն լայն թափ ստացած շարժմանը: Մարդկային ու ռազմական ռեսուրսների շուտափույթ համալրման անհրաժեշտությունը և այլ խնդիրներ Զրիստափորին պարտադրում են թողնել ժնւը, որտեղ կարճ ժամանակով հանգրվանել էր ընդհանուր ժողովից հետո: Նախապատրաստական աշխատանքները տարվելու էին Հունաստանում և Բուլղարիայում, որտեղից անհամեմատ դյուրին էր Կ. Պոլիս մտնելը: Զ. Միքայելյանը թողնում է ժնւը՝ չվերադառնալու հեռանկարով:

Հաստատվելով Հունաստանում՝ Ցուցական մարմինը և հրավիրված օժանդակ գործիչները ծավալում են նախապատրաստական ու կազմակերպչական բազմաբնույթ գործունեություն: Նախ, անհրաժեշտ էր ճշգրտել իրավիճակը Կ. Պոլսում: Ցուցական մարմնի անդամների և հրավիրված գործիչների մեծ մասը երբևիցե չէր եղել այնտեղ: Անձանոթ միջավայր հանպատրաստից մտնելը և գործելը անթույլատրելի էր: Դա կնշանակեր ի սկզբանե ձախողել գործը:

Անհրաժեշտ էր հստակեցնել, թե ի վերջո ո՞ր խնդիրն է իր գործունեության առանցքում դնելու Ցուցական մարմինը և որպիսի՞ք են դրանից սպասվող ակնկալիքները:

Հաջողության գրավականներից մեկն էլ ձեռնարկն իրականացնող խմբի հստակ, փոխհամաձայնեցված գործունեությունը կարող էր լինել: Թյուրըմբռնումները բացառելու համար պետք էր նախապես կանոնակարգել Ցուցական մարմնի անդամների և

¹ Ահարոնեան Ա., նշվ. աշխ., էջ 161:

² Տե՛ս Նիւթեր..., Դ. հատոր, խմբ. Հ. Տասնապետեանի, Պէրյու, 1982, էջ 78:

ծեռնարկին մասնակցող օժանդակ գործիչների իրավասություններն ու պարտականությունները: Հարկավոր էր կատարել վերջիններիս մտածված ու տեղին ընտրություն՝ հաշվի առնելով ոչ միայն նրանց նվիրվածությունը, այլև մասնագիտական ունակությունները, արտաքին տեսքը, վարվելակերպը, լեզուների իմացությունը և այլ հատկանիշներ: Վերջապես, անհրաժեշտ էր ճշգրտել անհրաժեշտ գեների ու զինամթերքի տեսակները, քանակը, ձեռք բերելու և գործադրման վայր փոխադրելու ուղիներն ու եղանակները:

Վերը նշված խնդիրները քննարկվում են Ցուցական պատասխանատու մարմնի 1904 թ. հուլիսի 16-ից Աթենքում գումարված ժողովներում: Դրանց, բացի արդեն Կ. Պոլիս անցած Թորգոմից, մասնակցել են Ցուցականի մյուս չորս անդամները և օժանդակ մի քանի գործիչներ: Այդ ժողովներում առաջին հերթին հստակեցվում են իրագործելիք ձեռնարկները: Նախ արձանագրվում է, որ անհնարին է 1904 թ. ընթացքում համատեղ ձեռնարկ իրականացնել մակեդոնացիների հետ՝ «վերջիններիս դրա համար անպատրաստ լինելու պատճառով»: Որոշվում է Իզմիրում 1904 թ. կազմակերպել դավադրական ձեռնարկներ՝ ուղղված «կառավարական հիմնարկությունների եւ բարձրաստիճան պաշտօնական անձերի դեմ»¹: Դրանով հանդերձ արձանագրվում է, որ Իզմիրի «ցոյցերի վերջնական ժամանակը որոշում է Պատ. Մարմինը, յարմարեցնելով այն Վիշապի գործերի ընթացքին՝ առաջ կամ յետ ձգելով այն»²:

Այդ ամենից հետո որոշվում է, որ իր «գործելիք տպաւորութիւնով եւ հաւանական հետեւանքներով» ամենաուժեղ, «ամենամեծ» և «ամենափայլուն» ձեռնարկը կարող է լինել սուլթանի տապալումը³, որին տրվում է «Նժույգի գործ» անվանումը: Այդ կապակցությամբ ընդունված որոշումն ուներ հետևյալ ձևակերպումը.

«Ի նկատի առնելով, որ Սուլթանն է, որ ծրագրել է ի կատար է ածում ամբողջ հայ ազգը իւր պետ. սահմաններում բնաջինջ անելու դժոխային գործը եւ այդ քանիցս ապացուցուած է պաշտօնական փաստաթղթերով...

Ի նկատի ունենալով նաեւ հայ ժողովրդի արդարացի զայրոյթը՝ Սուլթանի ձեռքով, նրա հրամանով – տասնեակ հազար անմեղ զոհերի արեան առաջ. զայրոյթ որ տարիների ընթացքում կուտակուելով այժմ դարձել է մի հաւաքական կոչ, հաւաքական իղձ ամբողջ ազգի –

ՎՐԷԺ

Վրեժ Կարմիր Սուլթանին,

Վրեժ Մեծ մարդասպանին.-

Որոշուեց – Սուրբ լինի ժողովրդի կամքը –

Թափուր դարձնել Ելտզի գահը ինչ գնով դա լինի...

Ահա այն գործը եւ միակ գործը Վիշապում, որ Պատասխանատու Մարմինն որոշեց իրագործել, առանց տատանումի եւ ոչ մի զոհողութեան առաջ կանգ չառնելով իւր կողմից»⁴:

Հօգուտ կայացված վճռի բերվում էին հետևյալ փաստարկները.

¹ Տե՛ս նույն տեղում, Ե. հատոր, խմբ. Ե. Փամբուկեան, Պեյրութ, 2007, էջ 399:

² Նույն տեղում, էջ 401-402:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 403:

⁴ Նույն տեղում, էջ 400:

1. Քանի որ սուլթանի հաջող ահաբեկումն անհնարին էր համարվում, ուստի կարելի էր հուսալ, որ դրա գործադրումն ամբողջ աշխարհում հարգանք ու ակնածանք առաջ կբերեր Չայ դատի նկատմամբ և տեղաշարժ կարձանագրեր այդ խնդրում:

2. «Նժույզի գործը» եվրոպական միջամտությունն առաջ բերելու ավելի մեծ հավանականությունն ուներ: Դա հիմնավորվում էր այն տրամաբանությամբ, որ պետության ղեկավարին հասցված հարվածը տակն ու վրա կաներ եվրոպական տերությունների հետ մինչ այդ ստեղծված քաղաքական հարաբերությունների համակարգը՝ վերջիններիս պարտադրելով իրենց իսկ շահերից ելնելով մասնակցել Թուրքիայի ներքին կյանքի կարգավորմանը:

3. Կար անխախտ համոզմունք, որ քանի դեռ օսմանյան գահին Աբդուլ Չամիդն է, հայերի դրության մեջ ոչ միայն որևէ դրական տեղաշարժ չէր կարելի ակնկալել, այլև վիճակը գնալով կվատթարանար:

4. Նման մի գործ կարող էր հաջողությամբ պսակվել միայն իրականացնողների համարձակության, անձնվիրության, տակտի և ընդունակությունների դեպքում: Յետևաբար, հաջողության դեպքում թուրք պաշտոնյաների և մտավորականության միջավայրում որոշակի ակնածանք էր ստեղծվելու հայերի նկատմամբ՝ ստիպելով հարգանքով վերաբերվել ու հաշվի առնել նրանց նվազագույն պահանջները¹:

Այսպիսով, «Նժույզի գործ»-ը, վրեժխնդրական ձեռնարկ լինելով հանդերձ, ի սկզբանե հետապնդում էր նաև քաղաքական խնդիրներ: Մի կողմից այն նպատակ ուներ սուլթանի ոչնչացմամբ վերջ դնել հայահալած քաղաքականությանը՝ թուրք կառավարողներին պարտադրելով գնալ զիջումների, մյուս կողմից՝ ակնկալում տերությունների միջամտությունը հօգուտ Չայ դատի:

Իրավիճակի բերումով հնարավոր չեղավ ձեռնարկը զուգակցել Սասունի շարժման հետ, քանի որ Ցուցական մարմնի վճիռը կայացնելու պահին Սասունի շարժման ավարտն ազդարարող վերջին համազարկերն էին հնչում Երկրում: Այնուհանդերձ, Ցուցական մարմնի «Փորձնական կանոնագրի» 3-րդ հոդվածը խնդիր էր դնում «...ամեն ճիգ թափել իր ստանձնած գործը կատարելու ներկայ 1904 թուականի ընթացքում եւ չետածագել՝ առանց ամենայնպիսի պատճառների կամ ակներեւ անհնարութեան առաջ կանգնած լինելու, 1905 թուականին»²: Այդ կերպ փորձ էր արվում Սասունի շարժման դեռևս թարմ տպավորությունների օգնությամբ մեծացնել Եվրոպայի վրա ձեռնարկի թողնելիք ազդեցությունը:

«Փորձնական կանոնագիրը» հայ ազատամարտի ուշագրավ փաստաթղթերից է: Եթե Անդրանիկի և Նիկոլ Դումանի մի փոքր ուշ կազմած հրահանգները ամփոփում էին հայդուկային և ինքնապաշտպանական կռիվներում ձեռք բերված փորձը, ապա «Փորձնական կանոնագիրը» ՅՅԴ-ի ցուցական գործունեությունը կանոնակարգելու փորձ էր: Այն մշակվել է 1904 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 10-ը Աթենքին մերձակա Պիրեա քաղաքում կայացած նիստերի ընթացքում: Փաստաթղթի տակ դրված է «Էլլեն» ստորագրությունը, թեև դրա ստեղծմանը մասնակցել են նաև Սաֆոն, Սև Աշոտը և այլք:

¹ Տե՛ս նույն տեղում, Դ. հատոր, էջ 195, Ե. հատոր, էջ 400, 403-404:

² Նույն տեղում, Դ. հատոր, էջ 222:

Քսան հողվածներից բաղկացած կանոնագիրը պարտավորեցուցիչ էր դառնալու իրավիճակին դրա համապատասխանությունը Կ. Պոլսում ստուգելուց հետո: Այն սահմանում է Ցուցական մարմնի իրավասությունները, կանոնակարգում կարգապահության, գաղտնապահության, դրամական և այլ խնդիրներ: Փաստաթղթի «Ցուցական Պատասխանատու Մարմին» բաժնում վերջինիս էր վերապահվում Կ. Պոլսի ձեռնարկների ձևն ու ժամանակը որոշելու, դրանք կազմակերպելու և ղեկավարելու իրավունքը: Իր առջև դրված խնդիրները լուծելու համար նա կարող էր հրավիրել օժանդակ գործիչներ, իսկ առանձին ձեռնարկների իրականացման համար՝ կազմել գործադիր կոմիտեներ: Կանոնագրի 13-րդ հոդվածը նախատեսում էր գլխավոր ձեռնարկն իրականացնելու ձևը որոշել Ցուցական մարմնի տեղում գտնվող անդամների միաձայն վճռով: Մնացած հարցերը վճռվելու էին ձայների պարզ մեծամասնությամբ¹:

Ցուցական մարմինը եռանդուն քայլեր է կատարում օժանդակ գործիչներ ընտրելու, Զունաստանում ու Բուլղարիայում նրանց համախմբելու, ամեն մեկի ունենալիք դերը ճշտելու և անվտանգ մուտքը Կ. Պոլիս ապահովելու համար: Դրան զուգահեռ իրականացվում են ռազմական բնույթի նախապատրաստական աշխատանքներ: Գլխավոր թիրախը ճշտելով հանդերձ՝ չկար հստակություն գործադրելիք ձեռնարկի հարցում, ուստի հրավիրվում են տարբեր խառնվածքի և ունակությունների տեր մարդիկ՝ նկատի ունենալով նրանց փորձառությունը և նվիրվածությունը: Կ. Պոլիս հեշտ թափանցելու և այնտեղ հնարավորինս ուշադրություն չգրավելու համար հրավիրվում են նաև որոշ թվով կանայք:

Հրավիրված օժանդակ գործիչների թվում էին Սարգիս Բարսեղյանը (Վանա Սարգիս), Համբարձում Աղաջանյանը (Կարո), Մարիա Չեյցը (օրիորդ Էմիլ), Ռուբինա Արեշյանը, Մարիա Սողոմոնովնա Օնչակովան (տիկին Միշել)՝ Բաբվից, Չարեհ Խաչիկյանը (սամաթիացի)՝ Ժնևից, Գրիգոր Սայանը (Զահեյ)՝ Ռուսինիայից, Արամ Անդրեասյանը՝ Եգիպտոսից, Լևոն Գյուլումյանը՝ Թիֆլիսից, Լևոն 2-րդը՝ Բաթումից, Մկրտիչ Ղարիբյանը՝ Սեբաստիայից և այլք: Կ. Պոլսում նրանց էին միանալու նաև Զրիս Ֆանարճյանը և Վռամշապուհ Զենդիրյանը²: Որպես դրսի գործիչներ՝ Ցուցական մարմնին Բուլղարիայից մեծապես օժանդակում էին Անտոն Գոշը (Անտոն Պոյաճյան), Երվանդ Ալաճաճյանը, Թագվոր Հակոբյանը և ուրիշներ: Հրավիրյալները սոցիալական ծագումով, կրթական մակարդակով, հնարավոր օգտակար հատկանիշներով միանգամայն տարբեր մարդիկ էին: Նրանց մեջ կային օտար լեզուների տիրապետողներ, ռազմական և դավադրական գործի փորձ ունեցողներ, այդ թվում Օսմանյան դրամատան գրավման և «Փոթորիկ»-ի անմիջական մասնակիցներ: Ոմանք էլ լոկ առաջին քայլերն էին անում ազատամարտում:

Թյուրիմացություն է այն մտայնությունը, թե «Լժույզի գործի» մասնակիցները բազմազգ և կոսմոպոլիտ հայացքների տեր մարդիկ էին: Դրան նպաստել է երկու հանգամանք.

Նախ՝ օժանդակ գործիչների թվում իրոք եղել են այլազգիներ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է բելգիացի անիշխանական Էդուարդ Ժորիսին և վերջինիս կնո-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 221-223:

² Տե՛ս նույն տեղում, Ե. Հատոր, էջ 398, 401-402:

ըն՝ Աննա Նելլենս Ժորիսին: Լինելով Չինգեր ընկերության Կ. Պոլսի մասնաճյուղի աշխատակից՝ Է. Ժորիսը մտերմացել էր Վ. Զենդիրյանի հետ: Վերջինիս միջոցով ծանոթացել էր ՅՅԴ խնդիրներին և բաժանորդագրվել «Pro Armenia» թերթին: Կիսելով հայ հեղափոխականների գաղափարները և ասելով ամեն տիպի բռնապետություն՝ Է. Ժորիսը բազմապիսի աջակցություն է ունեցել Յուզգական մարմնին: Մյուս այլազգին «ծագումով գերմանուհի, կրթությամբ ռուս և աշխարհայացքով դաշակցական» Մարիա Չեյցն էր: Բաբվում նա լիովին կապված էր հայկական միջավայրի հետ և ավելի ուշ ամուսնացավ դաշակցական մարտական գործիչ Թադևոս Ամիրյանի հետ: Կես հունածին էր Զրիս Ֆանարճյանը, բայց գործելով ՅՅԴ շարքերում տարակուսանքի տեղ չէր թողնում իր ազգային պատկանելության խնդրում: Ազգությամբ հայ էին նաև Անտոն Գոշն ու տիկին Միշելը, որոնց նույնպես երբեմն սխալմամբ այլազգի են անվանում:

Երկրորդ, կասկածից գերծ մնալու նպատակով Յուզգական մարմնի անդամները և մի քանի օժանդակ գործիչներ Կ. Պոլիս մտան օտարերկրյա անձնագրերով: Դա էլ առիթ է տվել աղավաղելու իրականությունը և հայ գործիչներին ընկալելու որպես այլազգիներ: Թյուրիմացությունները բացառելու համար արձանագրեմք, թե նրանցից ով ում անվամբ է մուտք գործել Կ. Պոլիս: Զ. Միքայելյանը մտել է որպես լեհական ծագումով հրեա Սամուել Ֆայն՝ իր «դուստր» Ռուբինա Ֆայնի (Արեշյան) ուղեկցությամբ: Սաֆոն կրում էր գերմանական Լիփա Ռիպս անունը: «Կնոջ» կարգավիճակով նրան ուղեկցում էր Մարիա Չեյցը՝ Սոֆի Ռիպս անվամբ: Սև Աշոտը կրում էր Կարլ Յուվանովիչ, Թորգոմը՝ Թրասա Յուվանովիչ, Զրիս Ֆանարճյանը՝ իտալական Սիլվիո Ռիչի, Չարեհ Խաչիկյանը՝ Ջորջ Պետրի Վարչամով անունները և այլն¹:

Որոշ հստակություն մտցնեմք Ռուբինա Արեշյանի հարցում: Դա անհրաժեշտ է երկու առումով: Նախ՝ ի տարբերություն շատերի, նա մինչ այդ անծանոթ անուն էր ազգային հեղափոխական միջավայրում: Երկրորդ՝ հեղափոխական գործերում սկսնակ 24-ամյա աղջիկը իրերի բերումով դառնում է Յուզգական մարմնի լիիրավ անդամներից մեկը և իր վրա վերցնում վճռական հարվածն հասցնելու նախաձեռնությունը:

Ռուբինան ծնվել է ռուսական բանակի հայազգի զինվորականի բարեկեցիկ ընտանիքում: Մինչև 1903 թ. հունիսի 12-ի օրենքին հաջորդած հայկական շարժումները նա որևէ շփում չունեցրեց ազգային միջավայրի հետ և անգամ չէր տիրապետում մայրենի լեզվին: Բայց մի դիպված կտրուկ փոխում է նրա կյանքի ուղին: 1903 թ. վերջին նա ծանոթանում է Զ. Միքայելյանի հետ: Վերջինս արդեն պատրաստվում էր հեռանալ Եվրոպա՝ ընդհանուր ժողովին մասնակցելու, սպա Կ. Պոլիս անցնելու համար: Ռուբինան Զրիստափորից առաջին անգամ լսում է բռնադատված հայրենիք ունենալու և հայերի բնաջնջման համիդյան ծրագրերի մասին: Անքուն գիշեր անցկացնելով՝ նա վճռում է օգտակար լինել իր ազգին և հայրենիքին: Տեղեկանալով Կարմիր սուլթանից վրեժխնդիր լինելու Զրիստափորի մտադրության մասին՝ Ռուբինան ցանկություն է հայտնում մասնակցել այդ գործին: Աղջկա վճռականությունը տպավորություն է գործում: Զրիստափորը հավանություն է տալիս՝ առաջարկելով սպասել²:

¹ Տե՛ս Ելլտրզգի Մահափորճը. Եղեռնական ատեանի դատաւարութիւնը տեղի ունեցած Պոլսոյ մէջ, 1905 նոյեմբերին, Աթէնք, 1933, էջ 4:

² Տե՛ս Աւօ, Ռուպինա Օհանջանեան, «Յեղափոխական ալպում», 1972, N 4, էջ 99-102:

Ամիսներ անց, երբ տարբեր կողմերից հրավիրվում էին օժանդակ գործիչներ, Զրիստափորը հիշում է խոստումը և Ռուբինային Բաբվից Եվրոպա կանչում: 1939 թ. Ա. Գյուլխանդանյանին հղած նամակում Ռուբինան այդ մասին գրում է. «1904 թուին գնացի Բեռլին: Անշուշտ կը յիշես թե ի՞նչպես ընկերները զիս ճանապարհ դրին մինչեւ Բալաշարի... Բեռլինից հեռագրով զիս Աթենք կանչեցին, ուր հաւաքուել էին Պատասխանատու Մարմնի անդամները Զրիստափորի գլխաւորութեամբ... Աթենք մնացի 3-4 օր, ուր կարգադրուեց անցագրի հարցը եւ այնտեղից Զրիստափորի աղջիկ դառնալով՝ մեկնեցինք Իզմիր, ուր Զրիստափոր գործեր ուներ կարգադրելիք եւ ես այլեւս նրանից չբաժնուեցի մինչեւ մահը...»¹:

Ռուբինան չի անդրադառնում Օսմանյան կայսրության տարածք անցնելու դժվարութիւններին: Մինչդեռ այդ օրերին Տուրքական մարմնին առավել հուզող խնդիրները երկուսն էին: Նախ, անհրաժեշտ էր ապահով թափանցել Կ. Պոլիս, ապա գտնել պահը, երբ սուլթանը հնարավորինս խոցելի կլինէր: Այդ խնդիրները փոխկապակցված էին և բացատրվում էին սուլթանի ծայրահեղ կասկածամտությամբ:

Գահ բարձրանալով դավադրության ճանապարհով և իր հպատակների վրա իշխելով որպէս կատարյալ բռնակալ՝ սուլթանը ոչ մեկին չէր վստահում: Նրա համար ամենակարևոր խնդիրն իր անձի անվտանգութեան ապահովումն էր: Զրաժարվելով Դումա Բախչէի հայրական պալատից՝ նա նախընտրել էր երկիրը կառավարել Բոսֆորի ափին գտնվող Ելդըզի ապարանքի անառիկ պարիսպների ետևից: Զվստահելով դրանց ամրությանը՝ սուլթանը պալատի շուրջ բարձրացնել էր տվել երկրորդ պարիսպը, իսկ վերջինիս դիմաց կառուցել զորանոցներ այբանական մի քանի հազարանոց կայսերական զվարդիայի համար: Խստագույն հսկողություն էր սահմանվել Բոսֆորի՝ պալատին առընթեր շրջանի վրա: Ամենուրեք դավադիրներ ու թշնամիներ տեսնելով, սուլթանը Ելդըզը դարձել էր անառիկ ամրոց, որտեղ ապրում էր մեկուսի կյանքով՝ հազվադեպ համարձակվելով դուրս գալ նրա պարիսպներից: Որպէսզի ուրբաթօրյա սելամընթի (մահմեդականների համար ոչ աշխատանքային նամագի օրվա) պատճառով ստիպված չլինի այցելել Կ. Պոլսի մզկիթներ և վտանգել իր անձը, Աբդուլ Յամիդն իր պալատի դարպասի մոտ կառուցել էր Սուլթանիե մզկիթը: Բայց անգամ այստեղ լիովին ապահով չզգալով՝ իրեն շրջապատել էր լրտեսների բանակով, գաղտնի ոստիկաններով և մատնիչներով: Դիպուկ է Լորդ Կինրոսի այն դիտարկումը, թէ սուլթանը հասել էր նրան, որ «սկսեցին խոսել, թէ Ստամբուլի բնակչության մի կեսը զբաղված էր մյուս կեսին լրտեսելով»²:

Լրտեսության համակարգը Աբդուլ Յամիդի օրոք իրոք հասել էր կատարելության: Այդ մասին իր հուշերում ուշագրաւ տողեր է թողել թուրք գրող Խալիդ Չիա Ռիշադըզիլը. «Ստամբուլի խավար փողոցները սարսափից քարանում էին: Լրտեսներ, լրտեսներ... Բոլորը վախենում էին մեկը մյուսից. Զայրերը՝ երեխաներից, ամուսիները՝ կանանցից: Կտտանքի բացահայտ դեկավարներին արդեն գիտեին և նրանց ստվերների երևալուց իսկ... բոլորն աշխատում էին ինչ-որ տեղ թաքնվել»³:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի իրար հետ չկապված երկու դեպք ավելի բարդացրին իրավիճակը: Նախ, 1896 թ. Օսմանյան դրամատան գրավումն ու Սամաթի-

¹ Նույն տեղում, էջ 108:

² St'u Лорд Кинросс, Расцвет и упадок Османской империи, Москва, 1999, стр. 579-581.

³ St'u Петросян Ю. А., Османская империя, Москва, 2003, стр. 336.

այի ռմբահարումները սուլթանի համար ակնհայտ դարձրին ռումբերի և պայթուցիկների գործածման իրական վտանգն իր անվտանգության համար: Նման դեպքերը կանխելու համար խստագույն հսկողություն սահմանվեց Կ. Պոլիս մտնող հայերի նկատմամբ, որոնք անմիջապես հայտնվում էին լրտեսների ուշադրության կենտրոնում: Խստիվ արգելված էր պայթուցիկ նյութերի մասնավոր ճանապարհով մուտքը կայսրություն, հատկապես՝ Կ. Պոլիս:

Երկրորդ դեպքը կապված էր Եվրոպայում անիշխանականների կազմակերպած ահաբեկչության հետ: Նրանց հարվածների հետևանքով իրար ետևից ընկնում էին միապետներ, պետական և քաղաքական գործիչներ: Դրանց մասին լուրերն անհաճո էին Մեծ մարդասպանի համար: Հատկապես մի դեպք շատ էր ազդել Նրա վրա: 1900 թ. Իտալիայի Հումբերտ I թագավորի սպանությունից և Փարիզում Պարսկաստանի Նասրեդդին շահի դեմ անհաջող մահափորձից հետո Իսպանիայում գտնվում է անիշխանականների կազմած մի ցուցակ, որում Հումբերտ I-ի անունից հետո մահվան դատապարտված գահակալների շարքում նշվում էր Աբդուլ Համիդի անունը¹: Հայտնի չէ, թե ինչ առնչություն ունեին այդ ցուցակի հետ թուրք ընդդիմադիրները և հայ հեղափոխականները: Բայց այդ դեպքն ավելի է ահաբեկում սուլթանին: Նա արգելում է սելամլըքին ներկա գտնվել այն օտարերկրացիներին, ովքեր չունեին իրենց երկրների հյուպատոսների կողմից նախապես ստորագրված հանձնարարականներ: Նախազգուշական այդ նոր քայլերը լրացուցիչ դժվարություններ էին ստեղծում մարդասպանի որջ թափանցելու համար:

Հայ գործիչները լոկ մոտավոր պատկերացում ունեին այդ օրերին Կ. Պոլսում տիրող վիճակի մասին: Նախկինում այնտեղ գործած Սմբատ Խաչատրյանը, Աշոտ Եղիկյանը և ուրիշներ անհնար էին համարում սուլթանի որջ թափանցելը կամ դրան մոտենալը: Ցուցական մարմնի անդամները Կ. Պոլսից հեռու մտմտում էին այն տարիների համար ամենաերևակայական ծրագրեր: Զննարկվում էին օդապարիկի օգնությամբ Ելըզլի պալատ թափանցելու, պալատից մեկ կիլոմետր հեռավորության վրա տուն վարձելու և այնտեղից սելամլըքի արարողության ժամանակ սուլթանի վրա կրակ բացելու, մզկիթից 100-200 քայլ հեռավորության վրա 1000-2000 կիլոգրամ պայթուցիկով բարձած սայլ կամ կառք պայթեցնելու և այլ տարբերակներ: Բայց այդ ծրագրերը Ցուցական մարմնի անդամների Կ. Պոլիս մտնելուց հետո դեն են նետվում:

Իսկ մինչ այդ Ցուցական մարմնի անդամներին դեռևս անհրաժեշտ էր թափանցել Կ. Պոլիս: Դա մեծ համարձակության հետ էր կապված: Նրանք մասնակցել էին ընդհանուր ժողովին, որն աննկատ չէր մնացել թուրքական իշխանություններից: Վերջիններս այդ մասին անգամ հարցապնդում էին արել բուլղարական կողմին: Սոֆիայում պատվիրակները կարող էին հայտնվել թուրք լրտեսների տեսադաշտում և Կ. Պոլիս մտնելիս ձերբակալվել: Տեղի է ունենում մի դեպք, որն ավելի է ուժեղացնում մտավախությունը: Օժանդակ գործիչ Լևոն Գյուլումյանին հանձնարարվել էր Վառնայից մեյիսիտ (պայթուցիկ նյութ) փոխադրել Աթենք: Նրա նավը մեկ օր կանգնած մնաց Կ. Պոլսի նավահանգստում: Ոստիկանների և լրտեսների ուշադրության կենտրոնում հայտնված Լ. Գյուլումյանն այնքան էր տպավորվել դրանից, որ անհնար էր համարում նավով Կ. Պոլիս մտնելը: Նա առաջարկում էր այնտեղ մտնել ցամաքով՝

¹ Տե՛ս Եազըճեան Գ., Ապտիւի Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Պեյրուք, 1980, էջ 379:

Մակեդոնիայով՝ իբրև հայդուկային խումբ¹: Նրա առաջարկը չի ընդունվում, քանի որ «Նժույզի գործում» հաջողությունը հնարավոր էր միայն անսկատ գործելու դեպքում:

Վերը նշված հանգամանքներն էին, որ Ցուցականի անդամներին հարկադրեցին Կ. Պոլիս մտնել որպես այլազգի օտարերկրացիներ: Աթենքի ժողովներից շատ չանցած սկսվում է նրանց առանձին-առանձին մուտքը Օսմանյան կայսրության տարածք: Մինչ այդ Կ. Պոլսում էին գտնվում Թորգոմը և օժանդակ գործիչ Զրիս Ֆանարճյանը: Զրիստափորի Կ. Պոլիս ժամանելուց հետո Թորգոմի և Ա. Եղիկյանի առաջարկությամբ Հոնան Դավթյանի փոխարեն Ցուցական մարմնի կազմում ընդգրկվում է նաև տեղացի գործիչ Վռամշապուհ Զենդիրյանը: Մինչդեռ օժանդակ գործիչների մեծ մասը շարունակում էր մնալ Բուլղարիայում և Հունաստանում: Թե նրանցից ովքեր, ի վերջո, պետք է մտնեին Կ. Պոլիս, որոշվելու էր միայն ձեռնարկի ձևը որոշակիացելուց հետո:

Զրիստափորը և Ռուբինան մինչ Կ. Պոլիս մտնելն անցնում են Իզմիր: Դա մասամբ թելադրված էր անվտանգության նկատառումով: Տեղի նավահանգստի հսկողությունն անհամեմատ թույլ էր և այն ավելի ապահով էր Կ. Պոլիս անցնելու համար: Մյուս կողմից, Իզմիրում կային հրատապ լուծելիք խնդիրներ: Զրիստափորը պետք է իրականացներ Չմյուռնիայի վերաբերյալ 3-րդ ընդհանուր և Ցուցական մարմնի Աթենքի ժողովներում կայացված որոշումները: Ոսկեհանքի կազմակերպության շարքերում առկա անառողջ մթնոլորտը արժանացել էր կոշտ գնահատականների²: Դրա հետ մեկտեղ Չմյուռնիան ընտրվել էր ցուցական գործունեության շրջան, իսկ նրա կառույցը՝ դրվել Ցուցականի անմիջական ղեկավարության ներքո: Հարկավոր էր համախմբել տեղի եռանդուն, բայց նաև անկարգապահ ուժերը: Բացի այդ, հիմք ունենալով «Փորձնական կանոնագիրը», Զրիստափորը պետք է կազմեր Ոսկեհանքի Գործադիր կոմիտեն և ճշտեր վերջինիս անելիքները:

Զ. Միքայելյանի Չմյուռնիա մտնելու և այնտեղ կատարած քայլերի վերաբերյալ փաստերը կցկտուր են և հակասական: Այնուհանդերձ, համադրելով դրանք՝ կարելի է պատկերացում կազմել նրա գործունեության այդ կարճ ժամանակահատվածի մասին: Վերը նշված նամակում Ռուբինան գրում է Չմյուռնիայում մեկ ամիս մնալու և 1904 թ. սեպտեմբերին Կ. Պոլիս անցնելու մասին³: Զրիստափորի՝ Չմյուռնիայում մեկ ամիս գտնվելու մասին վկայում է նաև Հ. Պոյաճյանը⁴: Այդ փաստերը հաստատվում են նաև թուրք իրավապահների իրականացրած հետաքննության արդյունքներով: Համաձայն դրանց՝ Սամուել Ֆայնը և նրա «դուստր» Ռուբինա Ֆայնը Վիեննայից (Չմյուռնիան զարմանալիորեն դուրս է մնացել նրանց տեսադաշտից) Կ. Պոլիս են ժամանել 1904 թ. սեպտեմբերի 18-ին և իջևանել Զրեռքըր հյուրանոցում⁵: Հետևաբար՝ Զ. Միքայելյանը Չմյուռնիայում է գտնվել 1904 թ. օգոստոսի երկրորդ կեսին և սեպտեմբերի առաջին կեսին:

¹ Տե՛ս Նիւթեր..., Գ. հատոր, էջ 69, Դ. հատոր, էջ 198-199:

² Տե՛ս Նույն տեղում, Բ. հատոր, էջ 132, 151-153, Ե. հատոր, էջ 402:

³ Տե՛ս «Յեղափոխական ալպում», 1972, N 4, էջ 108:

⁴ Տե՛ս Պոյաճեան Յ., Հ.Յ. Դաշնակցութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Հայրենիք» ամսագիր, 1957, N1, էջ 90:

⁵ Տե՛ս Ելլտըզի Մահափորձ. Եղեռնական ատանի դատաւարութիւնը տեղի ունեցած Պոլսոյ մէջ, 1905 նոյեմբերին, էջ 32:

Չմյուռնիայում Զ. Միքայելյանի գործունեության մասին մանրամասն և իրակա-
տությանն ավելի մոտ տեղեկություններ է տալիս Զ. Պոյաճյանը: Նա վկայում է, որ
Քրիստափորը փորձել է պարզել Իզմիրի կազմակերպության մեջ տիրող իրական վի-
ճակը և վերացնել առճակատումը տարբեր թւերի միջև: Բայց նրան չի հաջողվել
հաղթահարել Ոսկեհանքի կառույցի ղեկավար գործիչներ Աշոտ Մարթինի և հատ-
կապես Կ. Այվազյանի (Վ. Էտկար) նկատմամբ եղած անվստահությունը: Դրա համար
նա պարզապես ժամանակ էլ չունի: Ցուցական մարմնի Կ. Պոլիս անցած անդամ-
ները նրան համառորեն այնտեղ էին կանչում: Քրիստափորին մտում էր «Փորձնական
կանոնագրի» հիման վրա տեղացի գործիչներից հապճեպ կազմել Ոսկեհանքի Գոր-
ծադիր կոմիտեն: Բայց փոխզիջման սկզբունքով ձևավորված այդ մարմինը երկար չի
գործում, և նրա կազմը հետագայում որոշակի փոփոխությունների է ենթարկվում¹:

Այսպիսով, 1904 թ. սեպտեմբերի 18-ին Զ. Միքայելյանի, իսկ մի փոքր ուշ Ա.
Եղիկյանի՝ Կ. Պոլիս ժամանելով և Վ. Զենդիրյանին իր կազմում ընդգրկելով՝ Ցուցա-
կան մարմինն ամբողջանում է: Մինչ այդ՝ սեպտեմբերի 4-ին, Կ. Պոլիս էր մտել նաև
Սաֆոն: Դրանով ավարտվում էր Ցուցական մարմնի գործունեության նախապատ-
րաստական շրջանը և սկսվում ավելի վճռորոշ՝ գործնական փուլը: Տեղում ծանոթա-
նալով իրական պայմաններին՝ այն պետք է հստակեցնել ձեռնարկի իրականացման
հետ կապված հարցերը, ապահովել գործին պիտանի օժանդակ գործիչների ծախյալ
կենտրոնացումը Կ. Պոլսում, կազմակերպել զինամթերքի և այլ պարագաների փո-
խադրումը և, ի վերջո, ավարտին հասցնել այն խնդիրը, որի համար կյանքի էր կոչ-
վել:

Овик Григорян, Создание Указывающего-ответственного органа АРФ Дашнакцутюн и его деятельность до переезда в Константинополь, – В статье исследуются истинные обстоятельства создания Указывающего ответственного органа, избранного со стороны 3-го общего собрания АРФ Дашнакцутюн для деятельности в Константинополе. На основе первоисточников выявляются задачи, стоявшие перед этим органом, и их уточнение по ходу времени. Большое место в статье уделено разъяснениям причин, из-за которых в этом органе принимал участие лидер АРФ Дашнакцутюн Кристофор Микаелян, и освещению шагов, сделанных этим органом в промежутке между общим собранием и переездом в Константинополь.

Hovik Grigoryan, Creation of the Responsible-Indicative Organization of ARF-Dashnaktsutyun and Its Activity until Moving to Constantinople, - The article investigates the true circumstances of the creation of Responsible Indicative organization set up by the third general meeting of the ARF to act in Constantinople. Based on primary sources, the author identifies problems that stood before this organization, and their clarification in the course of time. A great part of the article is devoted to clarifications of the reasons due to which the leader of ARF-Dashnaktsutyun Christofor Mikaelian was involved in this organization, and actions that this organization made after the general meeting before moving to Constantinople.

Հովիկ Գրիգորյան – պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ղոցեստ:



¹ Տե՛ս Պոյաճեան Յ., Զ.Յ. Դաշնակցութիւնը Իզմիրի շրջանին մէջ, «Չայրենիք» ամսագիր, 1957, N 1, էջ 90:
46